գլխաւորք, Սեւան և Վան և Որմիա, մանաւանդ երկոքին սոքա ընդարձակք և աղէք. Ծովուն Վանայ կամ Բզնունեաց ունելով աւելի քան զ'1000 մղոն քառ. տարածութիւն երեսաց և բարձր գոլով աւելի քան զ'5000'. Իսկ Որմոյ 4000' են բարձրութեան, և գրեթէ հաւասար տարածութիւն. իսկ Սեւան որ և Ծով Գէղամայ՝ կայ 'ի բարձրաւանդակի 6000', և բարձրագոյն ևս լերամբք շրջապատեալ, 360 և աւելի մղոն քառ. որոյ և քաղցր են ջուրք, թէ և ոչ ամենայն ուրեք յեղերսն: Յետ սոցա լիճք երեւելիք են ընդ մէջ Տայոց և Գուգարաց, 5-6000' բարձունք, այսինքն Ձըլբիր որ է Ծովին Հիւսիսոյ կամ Պալեսորի ըստ նախնեաց. որոյ 34 քառակուսի մղոն է տարածութեան. մերձ նմին Փառաւան, Քաղաքին? կամ Քարգաղ, Սաղամա կամ Խանլարլը, Թէն, Թուման, և Արքա-ՀԷՕԼ որ հանէ զհամանուն գետն, այն է Ախուրեան. Զանլը փոքր լիճ 'ի Կաղզուան կամ յԵրասխաձոր: — Պաւրգլը, 'ի մոտից հարաւոյ Մասեաց 21 մղոն շրջապատաւ 'ի 5500' բարձու, արձակելով գետ համանուն. սա Թուի Շամբն Կոփայովի և Ծովն Գայլապատայ. և 'ի նոյն յԱյրարատ Աղբա- կամ Պէնիր-ՀԷՕԼ լճակ. և Խաղ-ՀԷՕԼ մերձ 'ի Պայէզիտ, և Աթ-ՀԷՕԼ յելից հիւսիսոյ Մակուայ: Յելից սոցա Ալա-ՀԷՕԼ 'ի Սոթս Սիւնեաց 'ի բարձու 8500', որ և բաժակ հրաբղխի Թուի: Իսկ 'ի հարաւոյ 'ի սահմանս Վանայ, Խալաթ- լիճ 'ի Պուլանըգ, Նաղոլ 'ի հարաւոյ Նորա, որ է ըստ հիւսիսոյ արևմտից Ծովուն Վանայ, Աղբը-ՀԷՕԼ և այլ լճակք մանունք 'ի սահմանս Սիփան լերին. և Հաստլ յարևելից Վանայ բարձր 5300': — Յարևմտեան Հայս Շամբն Կարնոյ, Թորնոմայ լիճն, ընդ որ անցանէ գետ Նորին. և 'ի հարաւակողմն 'ի Դ Հայս՝ Կէօյճէ-լ, այն է Ծովք լիճ, որ և Ծովակ խարբերդու: — Յիշատակին 'ի Նախնեաց մերոց և լիճք կամ ծովակք ոմանք, որպէս ծովակն Մեծամորի որ Թուի Պէնիր ՀԷՕԼ, ընդ մէջ Էջմիածնայ և Սարտարապատու. Ծովքն Ցըմբէայ 'ի կողմանս Աղբակայ, որ անծանօթ է այժմ, եթէ չիցէ լճակն փոքր որ Խաղաղ-ՀԷՕԼ կոչի 'ի հիւսիսոյ Քոգուրայ. Տաբրէաթծովն, որ այժմ կոչի Ղամբը-ՀԷՕԼ 'ի Ղազախ գաւառի Գանձակայ. և Մօրն Շէրթայ որ Թուի Աղբա-ՀԷՕԼ 'ի հիւսիսի դաշտին Ղարսայ, կամ թէ ցամաքեալ իցէ այժմ և մերձ լեալ քաղաքին Անւոյ, ուրանօր յիշեն Ճահիճս լինել ուղևորք ոմանք յԺէ դարու:

19. ԳԵՏՔ. — Ըստ լճացն առատ են և ընթացիկ ջուրք 'ի Հայս, այսինքն գետք, և անուանիք ոչ միայն բնական կերպարանքն, այլ առաւել ևս պատմական յիշատակք. զի յերկրին Հայոց բղխեն ակունք գլխաւոր գետոց արևմտեանն Ափոյ և խաղան 'ի հնադոյն թատեր քաղաքական անցից նախակիրթ և տիեզերական աղանց: Սակաւք 'ի գետոց անտի դիմեն ընդ հիւսիս, այլ շատք ընդ հարաւ և ընդ արևելս, իսկ որք յարևմուտս խաղան՝ և նոքա ապա դարձ առնեն 'ի հարաւ: Երեք են ընդունարանք ջրոցս, Պոնտոս Ծով 'ի հիւսիսի արևմտից, Կասպիականն յարևելս, և Ծոցն Պարսից ընդ հարաւ արևելից արտաքոյ Հայոց. և երեք ևս շտեմարանք 'ի Հայս այսինքն երեքին Ծովակքն Որմիոյ, Վանայ և Սեւանայ. բայց գետքն ամենեքին յիրար անկեալք միով միայնով բերանանան 'ի Ծովն երեսին. հիւսիսայինքն Ճորոխաւ, արևելեայքն Կուր-Երասխաւ միացելով, հարաւայինքն Շադիլ-Արատաւ՝ որ է գետախառնուրդ Եփրատ-Տիգրիսի: Իսկ աղբերաղբերքն, այսինքն տեղիք ուստի բղխեն գլխաւորք գետոց Հայաստան աշխարհի, բազմադակին իբրև յեօթն բարձրաւանդակս մեծամեծս. որոց առաջին է Բարձրն Հայք, յորմէ յոլովագոյն բղխեն գետք և ընդ երիս ևս դէմս արձակին. որոց առաջին ՃՈՐՈԽ բղխեալ 'ի լերանց Սպերու և խաղացեալ յարևմուտս՝ ապա առեալ դառնայ անդրէն ընդ արևելս զուգահեռական աղբերականցն. ժողովելով յայնմ կողմանէ զՋուրս Խաղաղեաց զՍամա-սոս, և զայլս. և ապա կշիռ ընդ հիւսիս իջանէ և ընդ մէջ կիւնիէ և Պագրատ քաղաքաց Թափի 'ի Պոնտոս, ընդունելով յայմէ՝ 'ի բուն Հայոց կողմանէն զՋուրս Սպերու, զԹորնոմ և զՕլմի, որ 'ի Թիկանց Կարնոյ արևելահիւսիս լերանց բղխեն, զԱրքամոս զուգակցաւն Շաղէրա, և զԱճարա որք 'ի Վրա-Հայոց բաժնէ. սա է առաջին եղեմաքուսն գետոցն Փիսոնէ:

20. Եւ երկրորդն 'ի Տուղղու լեռնէ որ 'ի հիւսիսոյ Կարնոյ՝ բղխէ, առաջք մի գլխաւորի եղեմական գետոց և համարէն արևմտեան Ափոյ, այնինքն է ԵՓՐԱՏ, 'ի բարձուէ՝ սուղ ինչ պակաս 9000 ոտից. սա զառաջինն Սէս-Ջուր կոչի, և 'ի դաշտին Կարնոյ միանայ ընդ միւսոյ ևս աղբեր որ յարևմտակողման լերանցն իջանէ և Սարլամայ կոչի Ջուր, և միով Սէս-Ջուր կոչմամբ խաղայ ընդ արևմուտս և եղեալ ընդ դաշտն Կարնոյ իջանէ ընդ հարաւ 'ի Դերջան, զորոյ զգետն ընդունի յահեկէ այսինքն յելից, և ապա կոչի Եփրատ կամ Փրատ յարևելեայց. և ընթացեալ նախ ընդ հար. Մ. մինչև յԵրզնկա, և ապա ընդ Մ. հար. ցԲԷպան Մատէն՝ ձեւ զահմանն Հայոց Մեծաց և զփոքրուն. յայնմէն ընդունելով զԳայլ գետ, Քէօմ-ըսու, Գոռ-ըսու, Գարաբոնաբ, Գոռմա և զայլս 'ի փոքր Հայս. իսկ յահեկէ գլխաւոր օժանդակ զՊինՀՀՕԼ-սու. սուղ ինչ 'ի վերոյ Քէպան Մատէնի ընդունի զմիւս թեւ իւր զբուն հայկականն Եփրատ որ և Արածանի կամ Մուրատ, զեկեալն յարևելից, 'ի Բաղրևանդայ, և հզօրացեալ իջանէ ընդ հարաւ, և ապա յարևմուտս, և գործէ արմունկն մեծ պատեալով զՄուշէր լերամբ (8), և ապա դառնայ ընդ Եւ. հար. ձևելով զսահմանն Հայոց ցՄիհրապ լեռն, ուր սպառին Դ Հայք, և անդ խառնի 'ի նա Գուրբուզդ-գետակ յահեկէ. անտի դարձեալ խաղայ ընդ Մ. հար. արտաքոյ Հայոց Մեծաց, ընդ մէջ Փոքրուն և Եփրատացւոց, գործելով ոչ սակաւ քարավաղս ընդ կոչկոտս և ընդ խոխոմս, զորս և հատանէ ընդ բովանդակ սահմանսն Հայոց. 'ի Պիր կամ Պիրիճիկ քաղաքէ և 'ի վայր դառնայ ընդ Եւ. հար. և նոքին ուղղութեամբ ընթանայ ընդ բովանդակ Միջագետս, Ասորիս և Բաբելոն (Իրագ-Արապի), և առ խուռնա քաղաքաւ խառնեալ ընդ Տիգրիսի գործէ զՇաթ-ԷԼ-Արաբ գետ, և յետ սակաւուց Թափի 'ի Պարսկային ծոց. մինչև 'ի գետախառնունսն լինին ընթացք նորա 1500 մղոն, որոյ երկու մասն 'ի հնգից 'ի Հայոց սահմանին է, ուր վասկս մանունս ևեթ ընդունի: